նամիների դէմ — ո՛վ, ո՛ր կողմից և ի՛նչ անուան տակ ուզում են թող լինեն նրանք:

Իսկ դու, հա՛յ ժողովուրդ, մի սիրտ մի հոգի դարձած պէտք է քո ոյժն ու աջակցութիւնը չխնայես մեր քաջարի բանակին և մեր կառավարութեանը անշեղօրէն ազատ ու անկախ Հայաստանը մարմնացնելու գործում:

Կեցցէ՛ ազատ, անկախ և միացեալ Հայաստանը:

Կեցցէ՛ Հայաստանի դեմոկրատիկ հանրապետութիւնը:

Հայ ժողովրդ. կուսակց. Հայաստանի Կենտր. Կոմիտէ. Հայաստանի Սոց.-Դեմ. Բանւ. կուս. Երևանի Կոմիտէ. Հայ Ռամկավար կուսակցութեան Հայաստանի Խորհուրդ. Հայ Անկուսակցականների Միութեան վարչութիւն»:

Իջևան—Դիլիջանի դէպքերը վերջին օղակն էին բոլշևիկների առաջ բերած ապստամբութիւնների շղթայի մէջ:

Ապստամբութեան հաշէյարդարից յետոյ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Նոր-Բայազէտում և Դիլիջանում կազմուեցին արտակարգ դատարաններ, որոնց և յանձնուեց ձերբակալածների դատը: Ընդհանուր առմամբ այս դատարանները գտնուեցին համբերատար ու զիջող և բացառիկ դէպքերում միայն հանեցին մահապատիժներ, որոնց ընդհանուր թիւը 10 չի անցնում:

Մայիսեան շարժումը վերջացաւ բոլշևիկների ջախջախիչ պարտութեամբ: Այդ շարժումը Հայաստանի համար տուեց մի շարք ծանրակշիռ հետևանքներ, որոնք ահագին նշանակութիւն ունեցան յետագայ դէպքերի վրա: Եւ առաջին ու ամենից աւելի ճակատագրական հետևանքը պէտք է համարել հայկական բանակի բարոյալքումն ու քայքայումը: Արդէն ըմբոստութեան դէպքերի պատմութիւնից էլ երևաց, որ շարժումը, ընդհանուր առմամբ, զինուորական էր. բոլշևիկներին յաջողւել էր մուտք գործել զօրամասերի մէջ, իրենց կողմը քաշել զինուորների մի մասը և այսպիսով բաժանում ու թշնամութիւն մտցնել բանակի մէջ: Քաղաքացիական կռիւների ընթացքին զօրքը կտոր-կտոր եղաւ. մի մասը գործօն աջակից էր բոլշևիկների, միւսը՝ կռւում էր նրանց դէմ. մի ահագին զանգուած էլ տատանւում և «չէզոքութիւն» էր պահպանում: Պետականութեան գաղափարը, որ առանց այն էլ ուժեղ չէր մեր նորաստեղծ ազգային բանակում, աւելի ևս թուլացաւ:

Բոլշևիկեան ապստամբութեան հաշէյարդարը գուգադիպեց Մայիս 28-ին, անկախութեան տարեդարձին, որը տօնուեց արտակարգ հանդիսաւորութեամբ, ամբողջ Հայաստանում, բայց, մանաւանդ, Երևանում:

Քաղաքը զարդարուած էր առանձին շքեղութեամբ: Խորհրդարանը, դիմնազիայի նոր շէնքը, քաղաքապետարանը, պետական հիմնարկութիւններն ու մասնաւոր տները թաղուած էին ծառերի ոստերի ու ծաղիկների, գորգերի ու դրօշակների մէջ: Աբովեանի վրա կանգնած էր շքեղ յաղթական կամար: Փողոցների ու շէնքերի զարդարանքը ստանձնել էր ակադ. Ա.